

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄԶԸ.
Գաւառաց 10 ՄԶԸ.
Վեցամսեյ Կ. Պոլսոյ 4 ՄԶԸ.
Գաւառաց 5 ՄԶԸ.
Դանուշման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար, զատ սակարկութիւն կըլ-
այ :



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԾԱԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԻՆՈՒՊՈԼԻՍ 20 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պէտքէն եկած հեռագիրը կա-
րեւոր տեղեկութիւն մը չէն բերեր
Տէրութեանց խորհրդոյ ուրբաթ և
շաբաթ աւուրց նստերուն վրայ, թե-
րեւ տրուած որոշմանց ծածուկ պահ-
ուած ըլլալուն պատճառաւ :

Վերջին թղթաբերով եկած լրագ-
րաց մէջ ալ արդէն գիտցուած էն ա-
ւելի տեղեկութիւն մը չկայ : Կը ծա-
նուցանեն միայն թէ «Արեւելեան Բու-
մէլի» անունով կազմակերպ ինքնօրէն
գաւառին մէջ թուրք զօրք չպիտի
գտնուի, այլ միայն բնիկ զինուորու-
թիւն մը պիտի կազմուի, որուն սպա-
ներն ուղղակի վեհ. Սուլթանէն պի-
տի անուանին՝ այս պայմանաւ որ
յիշեալ զինուորութեան մասնակցող
բնակչաց մեծ մասին կրօնքէն ըլլան :

Տէրութեանց խորհրդին մէջ Յու-
նաստանի պատուիրակներն ընդուն-
ուելու առաջարկութեան Ռուսիա ալ
մասնակցած է, ընդգծմամբ ամենայն ա-
կնկալութեան, որով Յունաց հա-
մակրութիւնը վերստին գրաւել կըս-
կըսի :

Բեդրասպուրի կէս պաշտօնական
յուրանալ լրագիրը կըսէ թէ Ռուսիա
ոչ միայն հարաւային թուրքիոյ մէջ
յունական տարրին առաւելութիւն
ստանալուն դէմ չէ, այլ իւր ամեն
ջանքով պիտի նպաստէ Արեւելեան
քրիստոնէից ազատութեան :

Տէրութեանց խորհրդին մէջ Յու-
նաստանի առաջարկութիւններն են՝
թրակիոյ և Մակեդոնիոյ յոյն ժո-
ղովրդոց համար լուրջ երաշխաւորու-
թիւնը, Կիլիկիոյ Եպիւրոսի և Թեսա-
լիոյ Յունաստանի հետ միացումն, և
թուրքիոյ մէջ յունական տարրին զար-
գացումը :

Գաղղիական Ռեբիւսիլիք Ֆրան-
սէզ լրագիրն Անգլիոյ խորհրդարա-
նին անդամ աղետաւորտ Հայասէր Պ.
Պրայսի նոր հրատարակած մէկ նշա-
նաւոր յօդուածը կը յիշէ, որոյ մէջ
Հայաստանի ինքնօրինութեան յա-
տակաւորութիւնը շինուած է :

Ահաւասիկ այս կարեւոր հրատա-
րակութեան վրայ յիշեալ լրագրին տը-
ւած տեղեկութիւնը :

«Այս միջոցիս, յորում փոքր Ա-
սիոյ երկրական կամ գոնէ քաղաքա-
կան վերակազմութիւնը պահանջելու
գիտաւորութիւն կընծայուի Անգլի-
ոյ լիազօր պատուիրակաց, Անգլիոյ
մէջ ուղարկութիւն ամփոփուած է
«Յօրթմայթ Ռեզիլի» անուն պարբե-
րական հանդէսին վերջին թուոյն մէջ
«Ապագայն փոքր-Ասիոյ» մակագրով
հրատարակեալ յօդուածի մը վրայ :
Հեղինակը, Պ. ձէյսն Պրայս, որ Հա-

յոց վրայ ջերմ համակրութիւն տա-
ծողներէն մին է, կեղծակցութեան
Հայաստան Ռուսիոյ ունեւորութեանց
դէմ միակ պատուար մ'ըլլալով, պէտք
է կէս անկախութիւն տալ անոր, որ
պէս զի Ռուսիա չկրնայ այդ նահան-
գին ամբողջապէս կնքել : Ըստ կարծ-
եաց Պ. ձ. Պրայսի, Ասիական թուր-
քիոյ փրկութեան լաւագոյն միջոցն է
վարչական դատարարակութիւն տալ
այդ քրիստոնէայ ազգին, որ կը յա-
ռաջագիծէ, և օր մը կրնայ ինքնօ-
րէն պետութիւն մը կազմել : Սոյն
գրուածքին մէջէն աչքի դարձող մի-
ակ հատուած մը հոս կը գնենք, ո-
րոյ համար կըսուի ժողովակաց (քը-
լիւպ) մէջ թէ Լորտ Պիքսֆիլտի ու-
ղարկութիւնը գրաւած է :

Ինչ է Անգլիոյ աղետաւորութեան
յայտնի նպատակաւորութեան — Հպատակ ազ-
գաց վիճակը բարեկեցիկ և Ռուսիոյ յար-
ձակման և ազդեցութեան դէմ պատուար
մը կանգնել : Երբոր Յունաց դատը կը
պաշտպանուի, Հայերը պիտի մոռցուին
Ասիացի ըլլալուն և մեզնէ հեռի գտ-
նուելուն համար : Տարակոյս չկայ որ
Հայք ալ Յունաց չափ արժանաւորութիւն
ունենին, և անոնցմէ ոչ ուռաղ ընդունակ
են 'ի նպատակ իրենց փորձուած ջանքերէն
օգուտ բաղելու :

Սակայն առաւել դժուարին է զեռ-
նել թէ ինչպէս կարելի է օգնել Հայոց :
Իսլամաց մէջ կապրին, և թէ պէտ աւ-
րով թուրքիոյ մէջ չորս միլիոն Հայ կայ,
բուն Հայաստանի մէջ հազիւ բաւական
զօրաւոր են անկախ իշխանութիւն մը
կազմելու համար : Բայց կրնայ յուշ ած-
ուիլ թէ այն դաւաճներն, որք Քրդաց
ասպատակութիւններուն ենթակայ են,
և գրեթէ թուրքական Հայաստանը կը
կազմեն, բացառիկ դաւաճներու պէտք
ունենին, որովհետեւ բացառիկ ցուերէ կը
չարջարին : Կրնայ այդ դաւաճութիւնով նոր
և մեծ դաւաճ մը կազմուիլ, որ Տրապի-
զոնի և Կիլիկիոյն կողմէն Սև ծովու կցի,
և հետեւաբար՝ ինչպէս Ռուսիոյ՝ նոյն-
պէս և Անգլիոյ ազդեցութեան առջև բաց-
ուի :

Այդ դաւաճը կրնայ՝ եթէ կարելի է՝
Եւրոպական տէրութեանց հաւանութեամբ
անուանեալ Եւրոպացի կառավարչի մը
վարչութեան ներքեւ դրուիլ :

«Այս դաւաճարը բնականաբար
հաճոյ ընդունելութիւն մը կը գտնէ
Անգլիոյ մէջ :

«Պ. Պրայս իւր Հայաստանի յատա-
կադիմն յառաջ տանելով՝ կաւեցնէ .

Գիւրգերը զսպելու համար՝ պէտք կըլ-
լայ տեղական զօրք զինուորութիւն մը
կազմել՝ մեծազոյն մասը քրիստոնէաներէ-
բաղկացեալ : Միանգամայն տեղական
ինքնակառավարութեան գրութիւն մը կա-
րող պէտք է ընէ՝ քրիստոնէայ գեղերն
իրենց զիւղապետական գործերը կառա-
վարելու : Դրան վճարութիւնը տուրքը պէտք
է որոշուի, և հարկաց մնացորդը տեղա-
կան պիտոյից գործածուի : Երբոր երկ-
րագործաց և արհեստագործաց անգործու-
թիւնն ու հանգստութիւնն ապահովի,
քրիստոնէայ ժողովուրդը չուտով կը շատ-

նայ, թուրքիոյ միւս կողմերէն ու Պարս-
կաստանէն դադարակնութիւնը կերթան
հոն, և ժամանակէ մ'ետեւ Հայք աւելի
կատարեալ ինքնօրինութիւն մ'աւելի ըն-
դարձակ քաղաքական կեանք մ'ունենա-
լու հասուն վիճակ մը կ'ստանան :

Բնականաբար այսպիսի յատակագիծ
մը կամ ծրագիր մը դիւրին չէ գործադ-
րել : Ոչ ոք կրնայ իսկ հաստատել թէ
հնարաւոր է . սակայն այս տեսակ բան
մ'արդէն գործադրուեցաւ Լիւանանու
մէջ և բաւական յաջողեցաւ : Եթէ Հա-
յաստանի մէջ ալ այսպիսի բան մը չփոր-
ձուի, և եթէ Քրդաց ասպատակութիւն-
ներուն արգելք մը չդրուի, Հայերն, որ
հազար վեց հարիւր տարուան պատերազմ-
ներու և հալածանաց մէջ իրենց ազգու-
թեան և կրօնին կապուած մնացին, պի-
տի անհետանան ախարհիս վրայէն և ի-
րենց երկրը վերջապէս Ռուսիոյ ձեռքը
պիտի անցնի :

«Կը տեսնուի ահա թէ Տէրու-
թեանց խորհուրդն ինչ կնքուող խըն-
դիրներ լուծելու կոչուած է : Ինչ
պիտի ըլլար եթէ Գաղղիոյ կառավա-
րութիւնը չյայտնէր տէրութեանց
խորհրդին գործը սահմանափակել,
Այսթէֆանոսի դաշնադրութեան հետ
կապակցութիւն չունեցող խնդիրնե-
րը դուրս ձգելով, գլխաւորապէս
այն դժուարութիւններն՝ որ կը ներ-
կայանան Եգիպտոսի, Սուրիոյ և Ս.
Տեղեաց համար : »

Կարենէն յունիս 2 թուով հետե-
ւալ տեղեկութիւնը կը գրեն Մոս-
կուայի կողմ լրագրին .

«Կարեն քաղաքն երէկ հանդիսիւ
ընդունեց կարնոյ զօրաբանակին հը-
րամանատար Լազարէֆ զօրավարն :
Այս քաղաքի զօրավարին Հայաստանի
մայրաքաղաքը հասնիլը մեծապէս քա-
ջալերեց գաւառին քրիստոնէայ ժո-
ղովուրդն, որովհետեւ Լազարէֆ զօ-
րավարն ոչ միայն կովկասի՝ այլ և
բովանդակ Հայաստանի մէջ հռչակա-
ւոր եղած է :

«Բոլոր ժողովուրդն, երիտա-
սարդը և ծերը, քաղաքէն մինչև
տաան վերստ դիմաւորութեան գնա-
ցին, և եռանդուն համակրութեան
աղաղակներով ընկերացան իրեն մին-
չեւ 'ի կարին : Կանայք ալ առաջին
անգամ մասնակցեցան այս հրապա-
րակային ցոյցին : Օղին պայծառու-
թեան և կանանց հագուստներուն
չընդունեան շնորհիւ՝ սոյն ընդու-
նելութեան տեսարանը խիստ գեղե-
ցիկ էր :

«Լազարէֆ զօրապետն այսօր բա-
նակետին աչքէ անցուց : Զօրքերն
ուժգնապէս բոցավառեցան այն ե-
ռանդուն և սրտագին խօսքերէն՝
զոր Լազարէֆ ուղղեց ամեն մէկ զօ-
րագունդի :

«Հետեւագործաց երրորդ բաժ-
նին հրամանատարը ճաշ մը տուաւ
Լազարէֆ զօրապետին : Բաղմամբիւ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ծակքը խորագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, Ղալա-
թիա Սանտրքըլտըր Հատտէֆի թիւ
198, Նօրս խան, Մասիսի գրասեն-
եակը :

Ճանրու ծակքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէտքէն 28 յունիս.

Քանի մը լրագիրը կը հաստատեն թէ
Տէրութեանց խորհրդոյ որոշման ներկա-
յացեալ խնդրոց վրայ վիճարանութիւն
ները կանոնաւոր կերպիւ յառաջ կեր-
թան : Այլ յուսացուի որ Տէրութեանց
խորհուրդը մինչև տասն օր իւր գործը
կաւարտէ : Լիազօր պատուիրակաց ա-
մենն ալ ներկայ կը գտնուին նիստերուն :

Պէտքէն 28 յունիս, իրիկուն.

Տէրութեանց խորհուրդը Սերվիոյ Հը-
րէից քաղաքական իրաւունքն և կրօնա-
կան ազատութիւնը հաստատեց :

Սերվիոյ սահմանադրութեան քննիչու պաշ-
տօնն յանձնաժողովոյ մը յանձնեց : Տէ-
րութեանց խորհուրդը վաղը Յունաց պատ-
ւիրակները պիտի լսէ :

Պէտքէն 28 յունիս, իրիկուն.

Պոսնիոյ և Հէրաքլէի նկատմամբ Աւստ-
րիոյ առաջարկութիւնն այսօր Տէրու-
թեանց խորհրդին պիտի ներկայանայ :

Պաւլարիոյ մէջ կրօնքն ազատ պիտի
ըլլայ :

Արեւելեան Բումէլիի նոր գաւառը ճան-
չուեցաւ ամեն տէրութիւններէն : Եւրո-
պական յանձնաժողով մ'այս գաւառին
սահմանները պիտի որոյն :

Յունական խնդրոյն վրայ վիճարանու-
թիւնն յետաձգեցաւ :

Պոստա-Բէլգրա 50 յունիս, իրիկուն.

Երեսօրիստական ժողովոյ փակման
տոթիւ կարգացուած տրքուական բանա-
խօսութիւնը կըսէ թէ արտաքին յարաբե-
րութեանց ներկայ վիճակն յոյս կուտայ
թէ կառավարութիւնը պիտի յայտնի միա-
պետութեան շահերը խաղաղութեան նը-
պատաւոր կերպիւ ապահովէ : «Ինչ որ
ալ պահած ըլլայ մեզ ապագայն, մեք
վստահութիւն ունինք, կըսէ ազգութեան
բանախօսութիւնը, թէ միապետութեան
շահերն ապահովապէս պաշտպանութիւն
պիտի գտնեն թէ՛ խորհրդարանէն և թէ՛
բովանդակ երկրին :

Այս առաջօր հասած հեռագիրէր

Պէտքէն 29 յունիս, իրիկուն.

Տէրութեանց խորհրդոյ այս աւուր նըս-
տին մէջ Պ. Տէլիեանի յիշատակագիր մը
կարդաց, որոյ մէջ կը բացատրէր այն օ-
գուտները՝ զորս Եւրոպա պիտի ձեռք բե-
րէ Հելլեն ազգին զարգացումը նպատաւ-
ւորելով, և կը խնդրէր որ Կիլիկիոյ, Եպի-
րոս և Թեսալիա Յունաստանի արուին՝
ստանց որ և է սահման մ'ը յուսնելու :

Տէրութեանց խորհուրդն որոշեց եր-
կուշարթի օրը լսել Բումանիոյ պատուի-
րակները :

Այլ կարծուի թէ Տէրութեանց խոր-

հուրդն երկուշաբթի օրը վերջնական կերպով պիտի որոշէ Սերգիոյ սահմաններն, որուն համար Շուվալովի կողմը, Պ. Տը չէյմէրըն և Նորտ Սալիզբորի յանձնաժողով մը կազմեցին՝ լուծում մը պատրաստելու պայտօնով, որովհետեւ այս խնդրոյս վրայ կարծեաց անհամաձայնութիւն կայ լիազօր պատուիրակաց մէջ: Սակայն վախճալու բան մը բնաւ չկայ: Կարծիք կայ թէ սոյն յանձնաժողովը Գաւառադէր նոր սահմանն ալ պիտի քննէ:

Հոսմ 1 յուլիս, առաւօտ: Նախընթաց օրը ցոյց մ'եղաւ Վենետիկի մէջ Աւստրիոյ հիւպատոսին դէմ, որովհետեւ զրոյց տարածուէր էր թէ մեծաւ հիւպատոսը թող չէ տուեր քանի մ'եւրիտասարդաց որ զուարճութեան համար ուղևորութիւն մ'ընեն 'ի Թրիեստ:

Արտաքին գործոց նախարարը ցաւ յայտնեց այս դէպքին համար Աւստրիոյ հիւպատոսին, և ծանոյց թէ խիստ միջոցներ 'ի դործ պիտի դրուին յանցաւորաց դէմ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՏ. Սուլթանը Պալալի աստիճան շնորհեց Բարձր. Սաֆվէթ փաշայի սրդի և արտաքին գործոց նախարարութեան Ա. Մէքթուպճի Բէֆէթ պէյին:

Շաբաթ դիշնր թարապիւս Գաղղիոյ դեսպանատունը կոչուեց մը արուեստ, որուն ներկայ գտնուեցան Մեծ—Եպարքոս Սաֆվէթ փաշան, Ղազի Օսման և Մուխթար փաշաներն, Համամեան Սարգիս Էֆէնտի, Ս. Ապրո Էֆէնտի և Մաճիտ պէյ:

Կիրակի օրը մայրաքաղաքիս Ռուսական դեսպան Լուպանով իշխանն այցելութեան գնաց Անգլիական նաւատորմին հրամանատար Հորնայի ծովապետին և ողջունի թնդանթներու ընդունուեցաւ:

Սպարապետի դշան զիմացի Գաթմա սուլթանին ապարանքը պարպուելով Պետական խորհրդոյ առժամանակեայ պաշտօնատունը ըլլալու յատկացաւ:

ՎԵՏ. Սուլթանին հրամանաւ Կ. Պոլսոյ քաղաքապետութիւնը դործակալներ զրկեց Սե ծով և Կէլիպօլու, որպէս զի պատրաստ գտնուած անոնքն ու փայտը փութով Կ. Պոլիս զրկեն:

Նախորդ առաջին նախարար Ահմէտ Վէֆիկ փաշան՝ որ քանի մ'ամսէ 'ի վեր Պոլսու կը գտնուէր, վեճ. Սուլթանին հրամանաւ կիրակի օրը Կ. Պոլիս վերադարձաւ, և սեղադի ելլալով պարտան երթալով 'ի Կ. Վեհափառութեան ներկայացաւ:

Յար Տիւ Պոսֆօր կը ծանուցանէ թէ Նաֆայէն Երուսաղէմ երկաթուղի մը շինելու արտօնութիւն արուեստաւ Անկիօ—Գաղղիական ընկերութեան մը, որոյ կեդրոնը փարիզ է:

Կ. Պոլսոյ քաղաքապետութիւնը կը ծանուցանէ թէ հացին գինը 6 զրչէն 3 չի իջեր է, իսկ Սիմիթճիներուն վաճառած հացը 3 Վ/2 է:

Տիֆլիսէն հեռագրով լուր կուտան Մոսկովայի կոյս լրագրին թէ Ալեքսանդրաբօլի առջևէն անցնող Ախուրան գետը յորդելով՝ բազմաթիւ տուններ կործանեց, շատ մարդիկ զոհուեցին և հազարաւոր կենդանիք մեռեր են:

Իսսկիւտար Եֆէմիմօսլլէ չորեքշաբթի ցաւալի դէպք մը պատահեցաւ, որ բժշկական ժողովին ուշադրութեան արժանի է:

Բուլթան արժանի է, և դեղագործաց ու հասարակաց համար զգուշութեան մեծ դառ ու խրատ մը կըրնայ ըլլալ: Յիշեալ թաղին մէջ Տիգրան անուն կառավար մը, 30 տարեկան, որոց խնամակալ, հիւմնայի հիւանդութենէ կը պառկէր. տաքութիւն դեղագործին, կէս ժամէն տալ կը խոստանայ. որոշեալ ժամանակին դեղարան կերթայ դեղագործը տանողը. Աբօսթօլ ուրիշ գործով զբաղեալ՝ ա՛ռ դեղը կըսէ, առջևի սեղանը ցուցնելով. մարդը շիջ մը կառնու կը տանի հիւանդին քովը, մեծ դէպք մը լեցուն կուտան հիւանդին. խեղճ իսկայն կիսի տոչորիլ, չարաչարիլ, որովհետեւ արուածը «պաճեղը» է եղեր, որ սեղանին վրայ պատրաստուած դեղին քով դրուած է եղեր, և սխալմամբ զայն առեր բերեր են. մարդիկ ասդին անդին կը վազեն՝ օգնութիւն հասցունելու համար, բայց հնար չըլլար. Աբօսթօլ կիմանայ կը հասնի հիւանդին քով, և հիւանդը «եթէ երբէք քովս առնանակ մ'ըլլար» նախ զքեզ կ'սպաննէի և ապա ես կը մեռնէի» կըսէ: Տիգրան հետեւեալ օրը անհանդուրժելի չարաշարածք զոհ գընաց այս անգղուշութեան. մեռաւ: Գեղարանը մինչև այսօր բաց է. կը կարծուի թէ բժշկական ժողովը դեռ լսած չէ:

Ռոստոմօն գրուած վերջին նամակներէ հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք:

Ռոստոմօ գտնուող Ռուսական զօրաց մեծ մասն օգետուն տաքնուուն պատճառաւ քաղաքին դուրսը վրաններով կը բնակին. սակայն իրենց ձիերն ու ձիադարմանները քաղաքին մէջ կը բնակին: Այս զօրքերը զարմանալի ընտանութիւն և կենակցութիւն ունին եղեր իրենց բընակած տան ընտանեաց հետ, իբրեւ թէ նոյն տանը մէջ ծնած և սնած ըլլային, իբրեւ հայր և մայր, իբրեւ որդի, իբրեւ քոյր և եղբայր, ոչ միայն քրիստոնէից, այլ և ոչ—քրիստոնեայ ընտանիքներու հետ ալ, այնպէս որ ոչ մէկուն տրտունջ մ'ընելու տեղի տուած են խիստ նուազ բացառութեամբ:

Քաղաքին ծովահայեաց կողմերը մարտիոցներ շիներ են, և այս օրերուն մէջ քաղաքական կառավարութեան սկզբնական ձևն ալ նոր կերպարանք մ'առեր է՝ աւելի Ռուսական իշխանութեան տակ մտնելով: Բրէնս Ալեքսանդրի քաղաքական կառավարութեան հրաժեշտ տալով նոր քաղաքական կառավարիչ մ'եկեր է ընդհանուր Պուլդարիոյ հրամանատարին կողմանէ զրկուած, կառավարական ժողովներու մէջ պաշտօնէից փոփոխութիւններ տեղի ունեցեր են, և դատաստանական (տալիյէ) ժողովոյ երեք ազգի կրօնական նախագահներն՝ Հայոց, Յունաց և Տաճկաց՝ հրաժարելով, նոյն ժողովոյ անդամներն ալ փոխուեցին: Վարչական (խտարէ) ժողովին անդամաց վրայ ալ նոր յաւելուած եղեր է. որուն կը նախագահէ եղեր նոր եկող Ռուս հրամանատարը:

Ռոստոմօն շրջակայքը գտնուած տաճկաց գիւղերու աւերմանքներն, յալիչապետութիւններն, աւարառութիւններն Յոյն գիւղացւոց կողմանէ եղած, որոց պատճառաւ գիւղ, աւան, արտորայ և ագարակ, ամեն բան երեսի վրայ թողած փախչելու ստիպուած էին, տաճկիւ չկրնալով լսել ընել տալ իրենց թախանձագին

բողոքներն ու գանգատներն: Հիմայ՝ լուսածին նայելով՝ որպէս թէ սկսեր է չափաւորուիլ և եղածներուն համար քննութիւններ կըլլան եղեր նոր կառավարչին կողմանէ: Քաղաքին քոյրքայեալ քարայտակներն կը յարդարուին եղեր, բայց աւելի Յունաց փողոցներուն խնամք կը տարուի, յունական ազդեցութեան զօրացած ըլլալով, իբրեւ թէ ամեն բանի բացարձակ տէր իրենք եղած ըլլային:

Խիստ մեծ է կըսեն ընդհանուր Տաճկաց համակրութիւնն Հայոց վերայ, և ամենքը կըսեն եղեր, թէ մենք հիմայ ճանչցանք Հայոց հաւատարմութիւնն ու բարեկամութիւնը, հետեւաբար այսուհետեւ լաւ պիտի ճանչենք Հայոց յարգն ու պատիւն. զի որչափ Յունաց երեսնէն վշտակրեցանք, նոյնչափ Հայոցմէ միտարուեցանք. բայց երանի թէ կըսէ նամակագրերէն մին, այս յիշատակը չուտով չմոռնային, և գէթ իրենց սրտերուն մէջ հետք մը դրոշմէր:

Քաղաքին առեւտրական վիճակը բաւական աղէկ կը նկարագրեն: Օսմանիւն 125 զրչի հաշուով կը գործածուէի, նոյնպէս նոր տարուան բերքերուն համար բաւական տրեւիւնաւոր ըլլալ կը վկայեն: Միայն թէ մշակութեան և հնձոց ծախքերը նախորդ տարիներուն հետ բաղդատմամբ երկպատիկ և եռապատիկ է կըսեն՝ թէ՛ կենդանեաց և թէ՛ մշակաց նուազութեան պատճառաւ: 'ի վերայ այսր ամենայնի ամենուն աչքն ու ականջը Տէրութեանց խորհրդոյն խաղաղարար արդեանցը կ'սպասեն. որով միայն ամեն սրտեր պիտի հանդարտին:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԷՍԶԱՄԵՆՈՒՄՈՒՄԻԷ			
19 յուլիս երկուշաբթի իրիկուն	17, 3		
20 յուլիս երեքշաբթի առաւօտ			
բացուեցաւ	17, 8		
ժամ 5 ին	17, 3		
Բուլթի երկաթուղի	Փր.	52 50	
Թոյլադրամ	Լր.	289	
ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ			
Կ. Պոլիս 19 ցունիս			
Սոսիթի Դէճէրալի Բոս	Անգլ. լր.	4, 5	
• ֆոխանակութեան		3, 8	
Կ. Պոլսոյ Պանքային		5, 20	
Քրէտի Դէճէրալ		3, 35	
Քրէտի Օթթո—Թիւր		—	
Փր.	1863	Ֆր.	93
•	1865	•	93
•	1869	•	84
•	1872	•	28
•	1873	•	83
Թրամաւայ	Օսմ. լր.	1	30

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՀՐԱՆԻՐ ԱՌ. Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՅԻՆ

Ազգային Ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ յուլիս 23 'ի Գում: դարու Մայր եկեղեցի:

Առեւանք պիտի բացուի ճիշդ ժամ 6 ին և գոյուի 10 ին:

Հրաւիրեալ են Երեւոփոխան Էֆէնտիներն՝ իրենց ազդասիրական պարտականութիւնը կատարելու փութալ:

19 յուլիս 1878 'ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլիս

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՅ ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՊԵՍԿԱՆՊՈՍ

ՕՐԱԿԱՐԳ

Հրաժարական վարչական կրօն. և քաղ. երկու ժողովոց:

Հ. Ս. Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Պէրլինէն շաբաթ գիշեր և կիրակի օրը ծածկանիչ հեռագրեր եկան Ս. Պատրիարքին՝ կարեւոր տեղեկութիւններ բերելով:

Համեմատ նայելով՝ հեռագրերէն մին կը ծանուցանէ եղեր թէ Գերմանիոյ կայսրութեան տեղակալ Գ. Կ.

հաժառանգութեան յատուկ ճաշի հրաւիրեր է յորմեան և խորհն սըրբազանները Բոյտամի պալատին մէջ: Երկրորդ հեռագիրն ալ կը ծանուցանէ թէ Հայկական խնդիրը Տէրութեանց խորհրդոյ օրակարգն անցեր է և թէ Պիմարք իշխանը Ս. Պատրիարք հօր զրկած բոլոր գրերը Տէրութեանց խորհրդոյ սեղանին վերայ դրեր է:

Ս. Պատրիարք հայրն, որ կիրակի օրը Պէշիկթաշ կը գտնուէր, վերջին հեռագիրն ստանալուն պէս՝ ելաւ Թարապիս գնաց Սնդղիոյ և Գաղղիոյ դեսպանաց հետ տեսակցելու:

Բ. Դուէն Պատրիարքարան զըրկուած գիր մը, Հայաստանի մէկ քանի դաւառաց մէջ պատահած կեղեքումները քննելու և յանցաւորները պատժելու պաշտօնով կառավարութեան կողմէն Ալի Շէֆիք պէյին քննիչ որոշուած ըլլալը ծանուցանելով, կառավարիչն որ Պատրիարքարան ալ ալ իւր կողմէն մէկը ցոյց տայ քննիչ պաշտօնէից հետ Հայաստան երթալու և անոր գործակցելու:

Ս. Պատրիարքն յիշեալ գիրը Խառն ժողովոյ յղեց. նա ալ՝ իւր պաշտօնավարութեան չըջանին աւարտած և հրաժարական տուած ըլլալը նկատելով, որոշեց իւր յաջորդին թողալ այս գործին տնօրէնութիւնը:

Չորեքշաբթի իրիկուն Ս. Պատրիարք հօր կողմանէ առ Գեր. Խորհրդական սրբազան գրուած գիր մը ծանուցանելով թէ Ն. Սրբազնութիւնը Պատրիարքական նախկին փոխտեղ. Արթ. Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանը փոխանորդութեան պաշտօնին մէջ վերահաստատել սրոշած ըլլալով, յիշեալ Արթ. քահանան իւր պաշտօնին հրաւիրել և նոյնը Խառն ժողովոյ ալ ծանուցանել հարկ է, խորհրդական սրբազան անմիջապէս Տ. Մկրեանին իւր պաշտօնին գրուելը հրաւիրեց. սակայն Տ. Մկրեան պատասխանեց թէ ինքը տակաւին ամբաստանութեանց ներքեւ լինելով և դատաստանի ըսկըզնաւորութիւն անգամ եղած չըլլալով, չէ կարող առաջարկեալ պաշտօնն ընդունելու. հետեւաբար ամեն բանէ առաջ հարկ է որ ծանուցուի իրեն թէ ամբաստանութենէ զերծ և ազատ է ինքը:

Խորհրդական սրբազանը Ս. Պատրիարք հօր որոշումն և Արթ. Տ. Մկրեանի տուած պատասխանները Խառն ժողովոյ հաղորդեց. սակայն ժողովն այս մասին իրեն ուղղեալ գիր մը չուենալով 'ի ձեռնին՝ հարկ չսեպեց սոյն խնդրոյն միջամտել:

ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Լրագրոյս քանի մը թիւերուն մէջ յուշուած Զ. մասնականին և թուականին դոյալաններէ յառաջ կամ յետոյ դրուելուն խնդիրը դեռ իւր վերջնական լուծումը չկրցաւ գտնել: Յոյ կամաց կը պարտաւորինք դարձեալ համառօտ տեսութեամբ միջ պատասխանել Մեծարդոյ Ռ. Յ. Պէրպէրեան Էֆէնտիին, որ լրագրոյս շաբաթ աւուր լուծով հրատարակած նամակին մէջ կը ծանայ հաստատել թէ Զ. մասնականին դոյալաններէ առաջ գործածութիւնն ոչ սխալ է, և ոչ անտեղի:

Պէրպէրեան Էֆէնտին իւր այս

* Խնդիրը Զ. մասնականին դոյալաններէ առաջ գործածութեան վրայ ըլլալով, չճապարկու և անվախճան վիճարար նութեանց դուռ չբանալու համար՝ մեր տեսութիւնն այս կէտիս վրայ միայն կ'ամփոփենք:

վճարումն ունի գրառված և ոչ աշխարհիկ
Հայ շնորհալուծ կազմակերպության կանոններ-
ունեն վրայ կը հիմնվեն, ոչ ալ որ և է
տրամաբանական խորհրդածութեան
այլ պարզապէս և մի միայն ճաշակի,
կամ՝ որ նոյն է՝ քրիստոնեական վը-
րայ կը հիմնվեն:

Կրօն թէ ֆ (ճ) մասնականը գը-
րաբար մէջ հոգովեալ բառերէ ե-
տե համաձայնութեան կանոնի են-
թարկեալ ըլլալով, աշխարհագրու-
մէջ անհամաձայն գործածութիւնն
այլանդակ և աններդաշնակ ձև մը
կառնու. ինչպէս՝ տան մի, ծովու
մի, արեամբ մի, գեղեցիկ գործով
մի, և այլն: Հետեւաբար սոյն այլան-
դալութիւնն ու աններդաշնակու-
թիւնն զերծ մնալու համար գոյա-
կանէն առաջ գործածելն աւելի պատ-
շաճաւոր կը դառնայ:

Թողունք որ նոյն իսկ գրաբարին
մէջ ֆ մասնականը քրիստոնեական
բառերուն հետ համաձայնութեամբ
իսկ գործածելը նշանակութիւն չու-
նի, վասն զի չենք հասկնար ինչ ըսել
է քրիստոնէ ֆ, քրիստոնէ ֆ, ընդհակա-
ռակն՝ աշխարհագրու մէջ ճ մասնա-
կանին հոգովեալ բառերէ ետե անհա-
մաձայն գործածութիւնն ոչ այլան-
դալութիւն ունի և ոչ աններդաշնա-
կութիւն: Ինչպէս քրիստոնէ ֆ, քրիստոն-
է ֆ, քրիստոնէ ֆ, և այլն: Ուս-
տի ո՛ր կողմ դառնանք, ֆ մասնա-
կանին գոյականներէ առաջ գործա-
ծութիւնը չկրնար արդարանալ, ոչ
ալ պաշտպանուիլ, քանի որ ֆ թուա-
կանին հետ չի թուելու վտանգը կայ,
որուն առաջին առած են մեր նախ-
նիք՝ գրաբարին մէջ ֆ թուականն
ընդհանրապէս գոյականէ առաջ, և
ֆ, ֆ, ֆ, ֆ, մասնականներն ալ
ընդհանրապէս գոյականէն ետքը
գործածելով: Արդի սովորութիւնն
ալ ֆ թուականին տեղ՝ ֆ բառը
գոյականներէն առաջ գործածելով,
և ֆ, ֆ, ֆ, ֆ մասնականներուն
տեղ՝ ֆ բառը գոյականներէն ետե
գործածելով, ամեն չի թուելութեանց
առաջին առած և իմաստից պար-
զութիւնն ապահոված են:

Արդ, քանի որ մեր գրաբար և
աշխարհիկ լեզուներն համաձայնու-
թեամբ ֆ (ճ) մասնականը գոյական-
ներէն ետե կը գործածեն, և առաջ
չեն գործածել, քանի որ լեզուի մ'ա-
մենէն կարեւոր հանգամանքներէն
մին՝ պարզ և անչիփթ իմաստայայտել
է, և քանի որ այդ երկու ֆերուն
իրարու տեղ գործածութիւնն իմաս-
տից չի թուելութիւն կարտագրէ, դարձ-
եալ կըսենք և կը կրկնենք թէ ֆ
մասնականին գոյականներէն առաջ
գործածութիւնը՝ թէ՛ գրաբար և
թէ՛ աշխարհագրու լեզուաց կազմու-
թեան հակառակ սխալ և անտեղի
արտուղութիւն մ'է:

... Խմբագիր էֆէնտի:

Աղբ. Սահմանադրութեան 18-րդ
տարեդարձի հանդիսին մասնագործողը
պատիւ ունի ծանուցանել մեծ արգոյ
հասարակութեան նոյն հանդիսին հա-
սակցից և ծախուց հաշիւը, որ է՝

Կերակրող տոմարի հատ	378	դին
	32	դրէն 29932
Պարտիզի մուտք	14417	
Ս. Փրկչի պնակը, բանկալ և գան		
	3534	
Ս. Յակոբայ պնակը և գանձանակը	640	
Պարտիզին ներքին վարձը, պա-		
քայլէ և սիրտի	5230	
Նուէր Գեր. Տ. Մատթէոս սըր-		
բազանէ	260	
» » Պատր. փոխ. հորմէ	63	
» » Տ. Ամբրոսիոս Ծ.		
վարդապետ	130	
» Սղէքսանդր Վարդապետ	990	
» Սահակ Ապրո	150	

» Մկրտիչ Քիւրքճիխանեան	150
» Ենովբ Բուճեան	150
» Կարապետ Ինճիճեան	260
» Գրիգոր Օտարաբեան	63
» Գաւիթ Խորճիճեան	193
» Մ. Աղաճ Կարապետեան	63

Շահ դրամական 54
Միայն վաթսուհ հազար վաթսուհ —
և եօթը դր 60067

Ուտելեաց, ըմպելեաց, զարդուց,
սպասարարաց և եղած բովանդակ
ծախքը 21367

38300

Ինչպէս կերելի սոյն հաշուէն, Հի-
ւանդանոցի սնտուկին շահ մնացած
է երեսուն և ութ հազար հինգ հա-
րիւր դր:

Մասնագործող սոյն հաշիւը հրա-
տարակելով, շնորհակալութիւն կը
յայտնէ յիշեալ հանգէսը իրենց ներ-
կայութեամբ պատուող Մեծ . աղ-
բայնոց և նուիրատուաց, նաև ա-
նոնց՝ որք իրենց զրկուած տոմակ-
ներն սիրով ընդունեցին, թէ և ան-
ձամբ չկրցին ներկայ գտնուիլ: Շնորհ
հակալ է միանգամայն կամուրջին Պոլ-
սոյ կողմը վալիտէ Սուլթան խանին
մէջ խոհարարապետ Մեծ . Յովհան-
նէս աղայէն, որ երեք տարիէ ի վեր
ձրիաբար իւր գործակիցներովը յիշ-
եալ հանդիսի սեղանին կերակու-
ներն կը պատրաստէ:

1878 յունիս 14 Մամբր յարգանք
Գրաս. Հիւ. ի դիմաց Հոգ. Հիւ.
Մեծ Նոր-Խան և 18-րդ Տար. Մատ.
Սէնէֆէր Մ. Մանուէլեան

... Խմբագրապետ էֆէնտի:

Ազգային Հիւանդանոցի պատուա-
րան հոգաբարձութեան հրաւիրանաց վը-
րայ՝ բարեկենդանի առթիւ մասնաւոր
պարահանդէսով մը՝ նորա դժուարատար
պաշտօնին զիւրութիւն մ'ընձեռելու նը-
պատակաւ կազմուած նպաստող մասնա-
խումբս, իւր բարեջան նախորդին հետեւ-
ելով, ձեռն ի գործ արկաւ Բերայի Ել-
տորատոյի սրահին մէջ ի նպաստ Աղբա-
յին Հիւանդանոցի պարահանդէս մը կար-
գադել, անցեալ փետրվար 24/8 մար-
տին, հասակից քառորդէն բոտ առաջ
նոյն Բերայի ազգային վարժարանաց յատ-
կացեալով:

Ազգային Հիւանդանոցի մէջ բազմա-
տեսակ պատուարկեց թուոյն առաւե-
լուն և հետեւաբար նորա երմտական վի-
ճակին ծանրացումն այն աստիճանի հա-
սած էին, որ Հիւանդանոցի հոգաբար-
ձութիւնը քաջաբերանաց պէտք ունէր:
Ներքին վիճակն անմիջական զարմանի կը
կարօտէր, և այն ալ առանց արտաքին
կարգի ջանք կարելի չէր:

Բերայի Նարեկեան երկուս վարժա-
րանն ալ, որ անցեալ տարւոյ յունիսին
ի վեր բացուած էր, չպիտի կրնար բազ-
մաթիւ աղքատիկ ուսանողաց պէտքերն
հոգալով իւր շարունակութիւնն ապահով-
եալ նկատուի, առանց նոր նպաստ մ'ըն-
դունելու:

Մասնախումբս այս տեսութիւններէն
զատ՝ իւր նախորդին գովելի սկզբնաւո-
րութիւնն ու պայծառ յաջողութիւնն
ունէր իրեն թեւադէր, բայց ընդհանուր
տաղանթն ու անձկութիւնն այնչափ վա-
տեցուցիչ էին, որ իւր առաջադրութիւն
նը կրնար շատերուն անպատեհ թուել:
Թեւեալ անյաջող իսկ: Բազմաւոր էր սա-
կայն մասնախումբս, որ կրցաւ կանխա-
կալ կարծիքներէն չզայնակալիլ, որ գիտ-
ցաւ ժողովրդեան գիթոյն ու կարեկցու-
թեան ուժն ու արժէքը լաւ գնահատել:
Վասն զի նա իւր նախատեսութեանը մէջ
չխաբուեցաւ: Կրնայ ըսել թէ գրեթէ
ոչ ոք խուլ մնաց իւր հրաւերին: Ամեն
անոնք որ՝ յամուռ պատասխարեալ խըղ-
ճալեաց յԱզգային Հիւանդանոցի՝ նպաս-
տելու կոչուեցաւ սոյն պարահանդիսին
ժար բացաւ իւր քսակն, որ մասնախում-
բս կարի ցաւ զգաց ամենուն զիմու-
համար բաւական օրեր չունենալուն վրայ:
Այլ ինչ ճար. բարեկենդանի նախըն-

թաց շարժումներն քաջաբերանաց այն-
պիսի ծանրակշիւ վիճակի մէջ էինք, որ
հապիւ տասն օր միջոցով առաջ կարելի
եղած էր սոյնօրինակ ձեռնարկ մ'ընել:
Այսու ամենայնիւ մասնախումբս իւր
ենթադրածէն աւելին գտաւ, զթաւառ
նուիրատուք ներկայ անյաջող պարագա-
յից աղքատութիւնն իրենց առատաձեռ-
նութեամբն հակակշռեցին և հասակից
զուարթ նախորդ տարւոյ քանակութեանն
հասուցին, Հիւանդանոցի կարօտելոց
ներկայն սիրովելու և Բերայի աղքատիկ
մանկեաց ապագայն յարգարելու ա-
ռաքինական զգացմամբ:

Արդ՝ մասնախումբս իւր ձեռնարկին
հաշիւը Զեր. . . հաղորդելով կաղաչէ
զԶեղ, խմբագրապետ էֆէնտի, որ ըն-
նոր ընէք հրատարակել զայն ձեր բազ-
մադիւն թերթին միջոցաւ, ի գիտու-
թիւն հանրութեան:

ՍՆՏՈՒԿ, Թղթադրամ 100 դրէ հաշուով
Տեղաւորեալ մտից հասցի՝ դր 95200
» օթեկաց » 10900
Նուէր և ստակի շահ » 2600
106700

Ընդհանուր ծախք դր 12626
Զուտ հասցի, որմէ պատրաստ
դրամ 81574
Եւ գանձելի ապաւիկը 12700—94074
106700

ԲԱՇԽՈՒՄՆ, ընթացիկ դրամի հաշուով *
Զուտ հասցի 94074 դր թըղ-
թադրամ 130 էն 122296,20
դր 122296,20

Բերայի աղբային վարժարանաց
համար Թ. Խորհրդին յանձնուած 27500
Հիւանդանոցի հոգաբարձու-
թեան յանձնուած 60374 դր
Թղթադրամ 73486,20
Նմանապէս գանձելի ապաւիկը
12700 դր Թղթադրամ 16310
դր 122296,20

Ինչպէս կերելի սոյն հաշուէն մէջ, հա-
սակցից գումարն 106700 դր թղթադր-
ամի հասած ըլլալով, 12626 դր ծախքը
զեղչելէ ետե, 94074 դր թղթադրամ
զուտ հասցի մնացած է, որ ընթացիկ
հաշուով կընէ 122296 . 20/0 դր:

Այս գումարին քառորդէն՝ ըստ նա-
խորդ պայմանի Բերայի աղբային վար-
ժարանաց և մնացեալն Ազգային Հիւան-
դանոցին կը վերաբերէր. միայն թէ հա-
սակցից գումարին մէջ զեռ ևս գանձելի
16310 դր կը մնար, որք ամբողջովն
Ազգային Հիւանդանոցի հոգաբարձու-
թեան թողուելու պայմանաւ՝ սոյն հո-
գաբարձութեան և Բերայի թաղական
խորհրդոյ մէջ զոյացած կարգադրու-
թեան համեմատ՝ Բերայի վարժարանաց
բաժնէն թեթիւ զեղչ մ'ընելով, 27500
դր պատրաստ դրամ Բերայի թաղական
խորհրդին յանձնուեցաւ, և մնացեալ
73486 . 20/0 դր պատրաստ դրամն ու
16310 դրէ ապաւիկներն, որք ի միա-
սին 94996 . 20 դր կը կազմեն, Հիւան-
դանոցի հոգաբարձութեան տրուեցան:

Պարտաւոր էր մասնախումբս իւր հա-
շիւն սյուստի շտապալու և ժողովրդեան
հետաքրքրութիւնն աւելի կանուխ գոհ
ընել, իւր փափաքն ալ այս էր, կը խնդրէ
ուստի որ աններդ չլինին իրեն զէմ այս
մասին, և նկատուութեան առնուլ բա-
րեհաճին որ՝ տոմակ տեղաւորելու հա-
մար ունեցած կարճ միջոցին մէջ կարելի
չէր մասնախումբս հաշուական ամեն խըն-
դիրները պարահանդէսէն առաջ կար-
գադել և դուրսը հաշիւներ չթողուլ:

* Հիւանդանոցի հոգաբարձութեան և
Բերայի Թաղ . Խորհրդոյ հաշուետուար-
ներն ընթացիկ դրամի վրայ բռնուած
ըլլալուն պատճառաւ, նոցա հաշուական
արձանագրութեանց համապատասխանե-
լու համար, զուտ հասցի ընթացիկ
դրամի վերածելով բաշխումը կատարել
պատշաճ թուեցաւ:

որոց հաւաքումն ու ամփոփումը բնակա-
նաբար երկար ժամանակի կը կարօտէին,
մանաւանդ քաղաքիս բնակութեանց բազ-
մատարած դիւքին մէջ:

Այս հակիրճ քաղաքագրութիւններէն յե-
տոյ՝ մասնախումբս պարտք մ'ալ ունի
կատարելու, այն է՝ սրտագին շնորհա-
կալութիւն յայտնել աղբային նուիրա-
տուաց, որք իրենց կարօտ եղբայրներն
ու քոյրերն անտես չափին և դանոնք քը-
րխտոնէ արար միջոցաւ արեցին: Միանգա-
մայն մասնաւոր շնորհակալութիւն մա-
տուցանել այն օտարազգի մարդասիրաց,
որք մասնակից եղան սոյն բարեկամատակ
գործին և իրենց լուսնայն անխախտ ձգե-
ցին նորա գանձանակին մէջ:

Մասնախումբս իւր տարած աշխատու-
թեամբ մեծ բան մ'ըրած ըլլալ չկարծէր,
միայն սա գոհունակութիւնը կ'զգայ որ
յաջողեցաւ իւր նախորդին սկսածն՝ տա-
րօրինակ և անձուկ ժամանակի մը մէջ՝
չարունակելու միջոց հանդիսանալ, և այ-
նու իրաւունք ստանալ յուսալու որ, ա-
պագային աւելի յաջող պարագաներ և
յաջողակ հետեւորդներ կուզան զինքը դե-
րագանցել:

Որոյ ակնկալութեամբ մնամք խորին
յարգանք

Ի զիմաց Ազգ. Հիւանդանոցի
նպաստող մասնախումբին

6. Մէրէֆ-Վանէ Ա. Հաճեան Գ. Գաւիթեան

ՊՈՂՈՍ ԷՖէնտի ՄԵՐՏԻՉԵԱՆ

Առաջին կարգի վկայեալ վաստաբան
Պատրաստ է ամեն կարգի օրինա-
ւոր դատերու փոխանորդութիւնյան
ձըն առնուլ դատերու վերաբերեալ
գրութիւններ խմբագրել և ուղղուն-
րուն դատական գործոց խորհուրդ-
տալ:

Գրասենեակն է Չարմաքըրլար
Քիւչիւք Եֆէնի խան վերնայարկ թիւ 9:
8

Ի Լ Ա Ն

Տէրիստատէթոյ իսկէլէրէրէ միւլ-
թէգիմէրէ իհալէ օլունան հալթալ
չէքիսի բուսումու, պէհէր չէքի հա-
լթալ իչին երկրիւր գայիմէ երկր
զուրուչ հիսապը իլէ միւլթէրի թա-
րաֆընտան օն, վէ սաթընը ճանի-
պիւտէն պէշ բարա պընմաք շարթը
իլէ իհալէ օլունակէրիսի հալթալ, միւլ-
թէգիմէրէրէն պաղլարը շարթը իհա-
լէյէ մուլապիֆ օլարաք, պէհէր չէքի
հալթալ իչին միւլթէրիսի թուլթա-
տուրապիլաիլքէրիլէ կէօրէ օթուր
քըրք բարա իհամ պարըլարը խապէր
վրիլէրէք, չիքեպլէթ իտ'լմէօի իւ-
զէրիլէ, օ միսլիւ միւլթէրիսի Ծե-
հիր էմանէթի մէհլիսին պիլ ճէլպ,
հիւքմի գանձան թէվիֆգան լաղըմ
կէլէն միւլթալթը թէթիլալ ու իհրա-
քըլլըմաքտա իքէն, երիլէ պաղը իս-
կէլէրէ միւլթէրիսի միւլթէնէպիֆ
օլմայարաք, պէր վէճհի մուհարըր
պէհէր չէքի իչին միւլթէրիսին ալ-
ղը մուլայէն օլան օն բարատան զի-
ետալ իհամ պարըլարը խալթիլալ ու
օլունալըրտան, պէլ պաղըլարը իշ-
պու նիղամըր հալթէթթէրի, վէ զի-
ետալ բարա պըմալարը մատտէսին
էօնիւ պընմաք իւղըլէ, պատէմա հաղ-
լարընտա հիւքմիւր գանձըն նիհայէթ
տէրէճէպիլին իհրաք մուքարըր պու-
լունալըրտան, պու տուրէթ հէմմիւլ-
թէգիմէրէ մայիւմ օլմաք վէ հէմալ
պուլտան սօնրա հէր գանդի միւլթէ-
րիսին գանդի չէքի միւլթէրիսի պէ-
հէր չէքի հալթալ իչին պէր վէճհի
մուհարըր օն բարատան զիետալ իս-
թէր իսէ, օ միւլթէրիլին իսկէլէյէ
էն եաղըն պուլունան Ծեհիր էմանէ-
թի միւլթէթթիլ վէ չալուշարընա միւ-
րաճալթ վէ իֆատէ իլլէմէսի լաղըմ
կէլէճէկի ումուլմէն պիլիմէք իչին,
մէհլիսի էմանէթ գարալ, իլէ իլանը
քէյթիլթէ իսլիլտար քըլլընտը:
94 հաղըրան 17

ՄԻՐԱՔ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

ԲԱՐԻ ՀՕՐ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՅՐԻ

ԳՐԵՅ ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻ

Ե- ի լոյս ընծայեցին անհատական եղբայր
Յովնանէն և Մկրտիչ Եսայան

Ի ՆՈՒՆԻՐ

ՀԱՅՈՅ ՀԱՐՅ ՆԻ ԶԱՐԳԱՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ

Կը ծախուի ամեն հայ գրական-
առնայ քով գին մէկ քսաննոց թղթ-
թաղարամ:

Շ Ի Թ Ք Մ Ա Ն Ո Ւ Ն Ք

Ի ՄԻՋԵՐԿԱՐԱԿԱՆԷ

Երկասիրեաց Հայեակ Ծ. Վ. Գրիգորեան

Օրհնականութիւն

Նաղդիպէկեան եղբայր հարազատաց

Մայրաքաղաքէս մինչև Եգիպտոս
և Երուսաղէմ 32 քաղաքաց և գիւ-
ղօրէից վրայ վիճակագրական շահա-
ւէտ տեղեկութիւններ պարունակող
368 երեսէ բաղկացեալ գիրք մ'է,
Հայաստանեայց անուն տպարանէ մը
Ելած:

Կը ծախուի Եէնի գաւառի և Մայր
Եկեղեցեաց բանկալներն և Կ. Պոլսոյ
Հայ գրականառնայ քով գին կէս ար-
ծաթ մէճնարէ:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ր Ե Ի Ք

Քեբէնաշտ, Մահ Սարգսոյ, Ճաշտ,
Այլ և այլ, Յատկապէս:

Հեղինակն իւր ինչ ինչ ոտանուոր
և արձակ գրութեանքն և լամարգինի
Գաղղիայի բանաստեղծին Սարգսոյ
Դանու գրաւոր տաղաչափեալ թարգ-
մանութիւնն ամբողջած է սոյն զըր-
բուկին մէջ:

Կը ծախուի Եէնի-Ճամի Զիլինկիւր-
ի Դատտէսի թիւ 2, Ս. Ղ. և Եղ-
մանեան գրատունը, և ուրիշ գրա-
վաճառաց քով գին 1 քսաննոց թղթով

ՄԱՐԻՈՆ ՏՐԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԲԸ

Կ Ա Մ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԱԳՆԻՐ

Հեղինակ Էմիլ Եր Միլգրո

Թարգմանից Գր. Չիլիէրէն

Սոյն նշանաւոր վէպն հինգերորդ-
այն է վերջին հատորն ալ իզմիրի Տէ-
տեան եղբայր տպարանէն Պոլս հա-
տած ըլլալով կը ծախուի Եէնի ճամի
Զիլինկիւրէր Դատտէսի թիւ 2 Ս. Ղու-
կասեան գրատունը և ուրիշ գրա-
վաճառաց քով գին 2 քրանք:

Թ Ո Ր Ո Ս Լ Ե Ի Ո Ն Ի

ԳՐԵԱՅ ՏԵՐԵՆՅ

Սոյն գեղեցիկ հիւս վիպասանու-
թեանն որոյ պատմական աղբիւրը
Թուրքիեան հարստութեանն անուած
է, և որ Գրիգորի 1443 թուականին
Հայոց Կիլիկիոյ մէջ վերստին ձեռք
բերած իշխանական մեծութեան ճշ-
գրութեամբ պատկերն է, ամեն Հայ
պէտք է փութայ մի օրինակ ունենալ

Կը ծախուի ամեն գրականառնայ
քով գին 2 քրանք:

ԽՈՐՀՐԴԱՌՈՐ ԿՂԶԻ

ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԻՐԸ

Ժիւլ Վէրն անուանի հեղինակին
սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ
գործին Գ. այն է վերջին հատորն ալ
իզմիրի հասած ըլլալով, կը ծախուի
Եէնի ճամի Զիլինկիւրէր Դատտէսի թիւ
2 Ս. Ղ. և Եղմանեան գրատունը և
ուրիշ գրականառնայ քով գին 2 քրանք:

ԱՐԻՒՆԱԼԻ ՄԱՐԻՐԻ ԶՈՒՀԻՆ

ՀԵՂԵՆԱԿ

Տալ Կոնստանտին

Թարգմանեց Խ. Լ. Պաբունուկեան

Սոյն գեղեցիկ վիպասանութեան,
որ միայն երկու հատորէ կը բաղկա-
նայ, երկրորդ հատորն ալ իզմիրի
հասած ըլլալով, կը ծախուի Եէնի
ճամի Զիլինկիւրէր Դատտէսի թիւ 2
Ս. Ղ. և Եղմանեան գրատունը և
ուրիշ գրականառնայ քով գին 2 քրանք:



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԵՆԱԻՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՅՈՒՆԻՍ 1 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՆ ՄԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՆ ԵՈՒՆԻՍ 30

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՒԵՆԱԻՆԵՐԸ

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

Ժ.Մ. Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

12	Պէշիքեմ, Թարապիւս, Պէշիքեմ, Բաշապ, Գանըմ, 32
Ա. Հիւսար, Վանիք, Չէնիք, Պէշիքեմ, Գանըմ, 12	
1 15	Պէշիքեմ, Պէշիքեմ, Բաշապ, Բ. Գ. մահ, Գանըմ, 12
Հիւսար, Գանըմ, Վանիքեմ, Չէնիքեմ, Պէշիքեմ, Գանըմ, 28	
2 30	Մէշիքեմ, Պէշիքեմ, Բ. Պանիք, Բ. Գանըմ, 28
Գանըմ, Պանիք, Բ. Հիւսար, Պանիք, Վանիք, Պէշիքեմ, 23	
3 15	Ա. Հիւսար, Գանըմ, Վանիք, Չէնիք, Պէշիքեմ, 23
Գանըմ, (Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, 25	
9	Պէշիքեմ, Պէշիքեմ, Բաշապ, Գանըմ, Ա. Հիւսար, 25
Գանըմ, Վանիք, Չէնիք, Պէշիքեմ, Գանըմ, Բաշապ, 25	
(Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, 25	

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՆՆՈՂ ՇՈՒԵՆԱԻՆԵՐԸ

Ե-Ր-Մ-Ի-Ն Ե-Ղ-Ե-Ր

12 45	Պէշիքեմ, Պանիք, Արնիք, Բ. Հիւսար, Բաշապ, Բաշապ, 28
Բաշապ, Պանիք, Պանիք, Պանիք, Պանիք, 6	
12 30	Գանըմ, Ա. Բ. Հիւսար, Գանըմ, Բաշապ, Բաշապ, 19
Բաշապ, Բաշապ, Պանիք, Բաշապ, Բաշապ, 2	
4 30	Պէշիքեմ, Պանիք, Արնիք, Պանիք, Բ. Հիւսար, 19
Բաշապ, Բաշապ, Պանիք, Բաշապ, Բաշապ, 2	
3 15	Պէշիքեմ, Պանիք, Արնիք, Պանիք, Բ. Հիւսար, 2
Պանիք, Բաշապ, Պանիք, Բաշապ, Բաշապ, 12	
5	Պէշիքեմ, Պանիք, Արնիք, Բ. Հիւսար, Բաշապ, 12
Պանիք, Բաշապ, Պանիք, Բաշապ, Բաշապ, 25	
6 30	Բաշապ, Պանիք, Արնիք, Պանիք, Բ. Հիւսար, 25
Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, 22	
8	Պանիք, Պանիք, Արնիք, Բ. Հիւսար, Բաշապ, 22
Բաշապ, Պանիք, Պանիք, Բաշապ, Բաշապ, 33	
9 30	Պանիք, Բ. Հիւսար, Բաշապ, Պանիք, Բաշապ, 33
Բաշապ, Պանիք, (Բաշապ, Բաշապ, Բաշապ, 23	
10 15	Պանիք, Բ. Հիւսար, Բաշապ, Բաշապ, 23
Պանիք, Բաշապ, Բաշապ, Բաշապ, 34	
10 45	Պանիք, Պանիք, Արնիք, Պանիք, Բ. Հիւսար, 34
Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, 49	
14 15	Պանիք, Բ. Հիւսար, Պանիք, Բաշապ, Բաշապ, 49
Բաշապ, Պանիք, Պանիք, Բաշապ, Բաշապ, 22	

ԱՐՆԻՔԷՆ ԲԵՂ

12	Պանիք, Արնիք, Բաշապ, 25
12 30	Պանիք, Բաշապ, 22
1	Պանիք, Բաշապ, 2
1 20	Պանիք, Պանիք, Արնիք, 33
9 15	Պանիք, Պանիք, Պանիք, Բաշապ, 2
10	Պանիք, Պանիք, Պանիք, Բաշապ, 6
11 5	Պանիք, Պանիք, Պանիք, Բաշապ, 25
14 35	Պանիք, Պանիք, Պանիք, Բաշապ, 6
12	Պանիք, Պանիք, Պանիք, Բաշապ, 22


ԱՐՆԻՔԷՆ Ե-Ղ-Ե-Ր

2 15	Բաշապ, Բաշապ, Պանիք, Չէնիք, Գանըմ, Ա. Հիւսար, 32
Գանըմ, Բաշապ, Պանիք, Չէնիք, Գանըմ, Բաշապ, 23	
(Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, Բաշապ, 32	
2 30	Պանիք, Ա. Հիւսար, (Բաշապ, Բաշապ, Բաշապ, 32
9 30	Բաշապ, Պանիք, Չէնիք, Պանիք, Բ. Հիւսար, 32
Բաշապ, Բաշապ, Պանիք, Բաշապ, Պանիք, 28	
10	Պանիք, Պանիք, Պանիք, Բ. Հիւսար, Պանիք, Գանըմ, 28
Պանիք, Բ. Հիւսար, Բաշապ, Բաշապ, Բաշապ, 17	
10 30	Բաշապ, Բաշապ, Պանիք, Չէնիք, Գանըմ, Ա. Հիւսար, 17
Բաշապ, Բ. Հիւսար, Բաշապ, Բաշապ, Պանիք, Բաշապ, 42	
14 15	Բաշապ, Պանիք, Չէնիք, Գանըմ, Ա. Հիւսար, 42
Բաշապ, Բաշապ, Պանիք, Չէնիք, Գանըմ, Բաշապ, 22	
14 40	Բաշապ, Բաշապ, Պանիք, Չէնիք, Վանիք, Արնիք, 22



ԱՅԵՐԻ ՎԻԿՈՐԸ

Ով որ իր մաղերուն թափիլը չու-
ղեր, «Այսին Վիկոր» կոչուած մաղի
անուանուած Վիկորն գործածելու է.
ուրիշ ամեն տեսակ մաղի Վիկորը
կամիւղելը, որ մաղ չի թափելու հա-
մար կը ծախուի, բոլորն ալ անօգուտ
են. իսկ Վիկորի օգուտը միլիոնաւոր
փորձերով տեսնուած է, և Պոլսոյ ու
գլխաւորաց մէջ օր օրի գործածող-
ներուն թիւը կաւելնայ: Անոնք օր
իրենց մաղերուն գեղեցիկութիւնը
կորսնցնելու վրայ են, չուտով գոր-
ծած են աս Վիկորն օր' Վիկորն չըլլան:
Թափելու վրայ եղող մաղերը կը հառ-
տատէ ու կամրապնդէ, թափածնե-
րուն տեղը մաղ կը բռնեն և երբ
մաղերուն արմատը զնաւուած է,
ու ճերմկեալ մաղերը անպատճառ
իր նախկին բնական գոյնին կը բերէ,
գործածելուն կերպը չընկերուն հետն
է. կը ծախուի Կ. Պոլսոյ Ղալաթիա
Միլիոնաւոր և Բիւրեղաց Վիկորիկայի
Մաղաւան:



ՄԱՐԻՐԻԿԱՅԻ ՄԱՂԱՅԱՆ

Կ. Պոլսոյ Ղալաթիա Միլիոնաւոր և
Բիւրեղաց Վիկորիկայի Մաղաւան կը
ծախուի, աղբիւր ճերմակ կտաններ,
ու սեղանի ծածկոյ և այլն, սեղանի
արձաթիւն պատուաւորաւ, դրոշմ
և այլն. կապի լամպաներ, սեղանի
ճերմակ յախճապակ սպասք, Ան